ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

15.11.2021թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձինք, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ա ն մ՝

1. ՀՀ կառավարության 30.09.2019թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1621-Լ որոշման մասին:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022 թվականի տարեկան ծրագրի կատարումն ապահովող ՀՀ Լոռու մարզում ծրագրված միջոցառումների մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

2. ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի «Զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման միջոցառումների ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 369-Լ որոշման N 2 հավելվածի 5-րդ, 13-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ և 28-րդ կետերի պահանջների մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

3. 44-օրյա պատերազմից վիրավորում ստացած զինծառայողներին և նրնց ընտանիքներին աջակցվող աջակցության ծրագրերի մասին:

/Զեկ.՝ ՀՀ ՀՀ Լոռու մարզպետարանից Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հասմիկ Մկրտչյան/

4. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծրագրերի մասին

- Զոհված /մահացած/, 1-ին և 2-րդ խմբերի զինվորական հաշմանդամություն ունեցող զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավում

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

- Զոհված /մահացած/, զինվորական հաշմանդամություն ունեցող զինծառայողների պետական երաշխիքային ծրագրերում ընդգրկելու /փաստաթղթավորում, փոխհատուցում, կենսաթոշակի նշանակում/

/Զեկ.՝ ՀՀ Լոռու մարզպետարանից՝
Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության
ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ Լուսինե Պապյան,
Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության
սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ Իրինա Գրիգորյան/

5. Պետական և այլ ծրագրերի ընթացքի մասին.

«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ Անուշ Ասլանյան.

- «Դեպի անկախ կյանք» ծրագրի շրջանակներում «EREO անկախ կյանքի ռեսուրս կենտրոնի» առաքելությունը, մատուցվող ծառայությունները և տարբեր կառույցների հետ համագործակցության հնարավորությունները

- ՀՀ Լոռու մարզում ձևավորված հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության խմբի առաքելությունը և անդամները

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Սուրեն Մաղաքյան.

- «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ - հոգեբանական աջակցություն Ստեփանավանի ցերեկային կենտրոնում»
- «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում»
- «Կառուցելով ապագան սեփական ձեռքերով»
- «Ներառական ճամբար»
- Ստեփանավանում նոր կենտրոնի «Անկախ կյանքի կենտրոն»-ի հիմնանորոգում

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի ներկայացուցիչ Հասմիկ Հովսեփյան.

- «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ»

«Խաչվող ուղիներ» ՍՀԿ-ի ներկայացուցիչ Կամո Եգանյան.

- «Հեքիաթ - հատուկ կարիքներով երեխաների սոցիալ-հոգեբանական և զարգացման ցերեկային խնամքի կենտրոն»-ի գործունեության մասին:

6. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հիմնահարցերի լուծմանը նվիրված միամսյակի մասին /15.11.2021թ. - 15.12.2021թ./:

7. Այլ հարցեր:

Ա ր ծ ա ն ա գ ր վ ե ց՝

Նիստին հրավիրվել էին նաև հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտում առավել ակտիվ և հեղինակություն ունեցող հասարակական կազմակերպություն-ներին և մասնակցություն ունեցան զինվորական ծառայության հետևանքով հաշմանդամություն ստացած անձինք /Աշոտ Մոսինյան, Հենրիկ Շաքարյան, Ռոբերտ Ղալայան, Արայիկ Վերմիշյան, Արթուր Սարգսյան, Վարուժան Խառատյան/ և մասնակիցներ /Արսեն Հակոբյան, Ավագ Գասպարյան/:

Առաջարկվեց զինծառայողներին Հանձնաժողովին ներկայացնել իրենց նախասիրությունների և մասնագիտական կրթություն ստանալու կամ տարաբնույթ հմտություններ ձեռք բերելու ցանկությունների մասին առաջարկներ:

Փոխօգնության խմբային հանդիպումներ կազմակերպելու հարցում Վանաձորի թիվ 23 հիմնական դպրոցի զինղեկ Հայկ Մայիլյանը առաջարկեց օգտագործել կրթօջախների հնարավորությունները:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Ներկայացված առաջարկների մասին գրություն նախապատրաստել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

բ/ Հանձնաժողովի նիստի նյութերը նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետարանի կայք-էջում տեղադրելու համար:

2. Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Աննա Գասպարյանին՝

Ապահովել աշխատանքների հրապարակայնությունը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱԼԵՐԻ ՋԱՂԻՆՅԱՆ